ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 86-Լ

«27» հունվար 2023թ. ք. Էջմիածին

ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով, որ ս.թ. հունվարի 26-ին կյանքից հեռացել է ՀՀ վաստակավոր մարզիչ, ԽՍՀՄ սպորտի վարպետ, Էջմիածին քաղաքի պատվավոր քաղաքացի Մկրտիչ Չիրքինյանը: Հոգեհանգստի համար ծաղկեպսակ ձեռք բերելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2023թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 35.0 հազ. դրամ փոխանցել ԱՁ Մանուկ Անդրեասյանի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 87-Լ

«27» հունվար 2023թ. ք. Էջմիածին

ՀՈՒՆՎԱՐԻ 28-Ի՝ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 31-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով, որ հունվարի 28-ին՝ Հայոց բանակի կազմավորման 31-ամյակի կապակցությամբ, Արցախյան հերոսամարտի զոհերի հուշարձանին և 44-օրյա պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող պուրակում ծաղկեպսակ դնելու և ծաղիկներ խոնարհելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2023թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 65.0 հազ. դրամ փոխանցել ԱՁ Մանուկ Անդրեասյանի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 884

27 հունվարի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Հ. Դանոյան փողոցի թիվ 32 տան բնակիչ՝ Հրաչյա Միշայի Գինոսյանի դիմումը իրեն և Արծրուն Միշայի Գինոսյանին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 28122022-04-0113 տրված՝ 28.12.2022թ., «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 16.01.2023թ. կազմված հատակագիծը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրերը՝ 04002KDCMZKL, 04002XK84UEA/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ. Դանոյան փողոցի թիվ 32 հասցեում գտնվող անշարժ գույքը համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի, բաժանել.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Հ. Դանոյան փողոց թիվ 32 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Հ. Դանոյան փողոց թիվ 32/1 բնակելի տուն :

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 894

ՏԳ 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Խրիմյան Հայրիկի փողոցի թիվ 13ա տան բնակիչ՝ Արթուր Ստեփանի Սիմոնյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Խրիմյան Հայրիկի /նախկին Չերնիշևսկի/ փողոցի թիվ 13ա հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 04.03.2020թ. հաստատված թիվ 295 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002T2SHMAJ/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Խրիմյան Հայրիկի փողոց թիվ 13/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 90Լ

29 հունվարի 2023թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի, Մ. Գորգիսյան փողոցի թիվ 20 տան բնակիչ՝ Իվետա Վահրիչի Մարտիրոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Գորգիսյան /նախկին Կույբիշև/ փողոցի թիվ 20 և Մ.Գորգիսյան փողոցի թիվ 20/1 հասցեների անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ թիվ 29072022-04-0012 տրված՝ 29.07.2022թ. և թիվ 06062022-04-0043 տրված՝ 06.06.2022թ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002WHRJL7F/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Մ. Գորգիսյան փողոց թիվ 20 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 914

2023թ. Ք. ԷՋՄԻԱԾԻՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ <<ԶՎԱՐԹՆՈՑ>> ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Այվազովսկի փողոցի թիվ 7 տան բնակիչ Դավիթ Մանասերի Մկրտչյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն, Ռոզա Զալիբեկի Մկրտչյանին, Հարություն Դավթի Մկրտչյանին, Մանասե Դավթի Մկրտչյանին և Անի Դավթի Մկրտչյանին պատկանող /հիմք՝ Էջմիածնի քաղաքապետի կողմից 17.12.2014թ. տրված քաղվածքը, Էջմիածնի քաղաքապետի կողմից տրված տեղեկանքը, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար՝ Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 25.01.2023թ. հաստատված թիվ 468 գրանցամատյանով գրանցված փաստաթղթի պատկանելիության վերաբերյալ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու մասին որոշումը և <<Աստղիկ Մանուկյան>> ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0096/ կողմից կատարված չափագրությունը/, <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0317-0009/, 0.45հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի փոխադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. թիվ 151 կարգադրությամբ ստեղծված բարձրարժեք հողատեսքը ավելի ցածրարժեք հողատեսքի փոխադրող հանձնաժողովի 23.12.2022թ. N01/14/08056-2022 եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0317-0009/ 0.45հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 92Կ

«29» հունվարի 2023թ.

ք. Էջմիածին

ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 38-րդ, 39-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 21-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով Մարջան Ալբերտի Գրիգորյանի լիազորված անձ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգված 4-րդ շենքի 33-րդ բնակարանի բնակիչ Արշավիր Վաղարշակի Զարգարյանի 16.01.2023թ. դիմումը և Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 20.01.2023թ. թիվ 3 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլտվություն տալ Մարջան Ալբերտի Գրիգորյանին /ծնված՝ 11.06.1986թ., անձնագիր՝ AR 0548409/ օտարել համասեփականության իրավունքով իրեն և իր անչափահաս երեխաներին՝ Վաղարշակ Սարգսի Զարգարյանին /ծնված՝ 23.09.2008թ., ծննդյան վկայական՝ ԱԱ 269865/ և Նարե Սարգսի Զարգարյանին /ծնված՝ 20.12.2011թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 177070/ պատկանող Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Չարենց թաղամասի թիվ 19 հասցեի հողամասը:
2. Հսկողություն սահմանել անչափահասներ Վաղարշակ Սարգսի Զարգարյանի և Նարե Սարգսի Զարգարյանի ծնող Մարջան Ալբերտի Գրիգորյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 936

«27» հունվարի 2023թ.

ք. Էջմիածին

ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 38-րդ, 39-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 21-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ. Մաշտոց փողոցի 30-րդ շենքի 29-րդ բնակարանի բնակիչ Նեկտար Սերժիկի Մարտիրոսյանի 28.12.2022թ. դիմումը և Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 17.01.2023թ. թիվ 2 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլտվություն տալ Նեկտար Սերժիկի Մարտիրոսյանին /ծնված՝ 06.12.1980թ., անձնագիր՝ AS 05259988/ փոխանակության եղանակով օտարել համասեփականության իրավունքով իր անչափահաս երեխաներ Արմեն Աշոտի Այվազյանին /ծնված՝ 28.06.2012թ., ծննդյան վկայական՝ ԲԱ 370575/ և Արշակ Աշոտի Այվազյանին /ծնված՝ 01.03.2008թ., ծննդյան վկայական՝ ԲԱ 370563/ պատկանող Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Ա. Մանուկյան թաղամասի թիվ 92 հասցեի գույքը:
2. Հսկողություն սահմանել անչափահասներ Արմեն Աշոտի Այվազյանի և Արշակ Աշոտի Այվազյանին ծնող Նեկտար Սերժիկի Մարտիրոսյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МУНИЦИПАЛИТЕТ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՎԱՆ
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 944

«30» հունվարի 2023թ.

ք. Էջմիածին

ԱՐԱՐԱՏ ԱՆՏԻՖԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստան ի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-36-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Զվարթնոց թաղամասի Այվազովսկու փողոցի 49 տուն հասցեի բնակիչ Անդրանիկ Արարատի Գևորգյանի 25.01.2023թ. դիմումը, Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 30.01.2023թ. թիվ 4 նիստի արձանագրությունը, ուսումնասիրություններն ու փաստերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի Զվարթնոց թաղամասի Այվազովսկու փողոց 49 տուն հասցեի բնակիչ Արարատ Անտիֆանի Գևորգյանի /ծնված՝ 03.04.1958թ., ն.ք.՝ 007641848/ նկատմամբ սահմանել պատրոնաժ՝ պատրոն նշանակելով նրա որդուն՝ Անդրանիկ Արարատի Գևորգյանին /ծնված՝ 06.09.1991թ., ն.ք.՝ 007187479/:
2. Հսկողություն սահմանել Արարատ Անտիֆանի Գևորգյանի նկատմամբ պատրոն նշանակված Անդրանիկ Արարատի Գևորգյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 954

30 հունիսի 2023թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ Մ.ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՕԲՅԵԿՏԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022FMHHWR և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 02.09.2022թ. կազմված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացու փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.00275հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 27.5քմ / 27.5քմ արտաքին և 22.4քմ ներքին / մակերեսով առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտը համարել Վաղարշապատ համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Օրինականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացու փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.00275հա մակերեսով հողամասում, ինքնակամ կառուցված 27.5քմ / 27.5քմ արտաքին և 22.4քմ ներքին / մակերեսով առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտը:
3. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացու փողոցում գտնվող 27.5քմ / 27.5քմ արտաքին և 22.4քմ ներքին / մակերեսով առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00275հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձին՝ Կարեն Չուբարի Գրիգորյանին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
АРМАВИРСКИЙ МАРЗ МЭРИЯ
ВАГАРШАПАТСКОГО СООБЩЕСТВА
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 964

30 հոկտեմբեր 2023թ.

ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0244 / կողմից 02.09.2022թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002XLBFZ67.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի սեփականություն հանդիսացող Սուրբ Մ.Խորենացու փողոցում գտնվող առևտրի ու սպասարկման ոլորտի օբյեկտին և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00275հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սուրբ Մ.Խորենացու փողոց թիվ 2/50:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 974

30 հոկտեմբեր 2023թ. ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Արաքս համայնքի Խորոնք գյուղի Իսահակյան փողոցի թիվ 1 փակուղու թիվ 11 տան բնակիչ Գագիկ Համլետի Դանղյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք 17.06.2019թ. տրված թիվ 17062019-04-0003 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096 կողմից 16.03.2022թ. կազմված հատակագիծը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022LHZQEN / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ծովակալ Իսակովի փողոցի թիվ 5 փակողու թիվ 8 հասցեում գտնվող 0.0392հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 187.8քմ / 187.8քմ արտաքին, ներքին 148.9քմ / մակերեսով բնակելի տունը և պարիսպը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ծովակալ Իսակովի փողոցի թիվ 5 փակողու թիվ 8 հասցեում գտնվող 0.0392հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 187.8քմ / 187.8քմ արտաքին, ներքին 148.9քմ / մակերեսով բնակելի տունը և պարիսպը ճանաչել օրինական, որի համար սահմանված 369 779 / երեք հարյուր վաթսունինը հազար յոթ հարյուր յոթանասունինը / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МЭРИЯ ВАГАРШАПАТА
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 984

30 հունվարի 2023թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9 ՇԵՆՔԻ ԹԻՎ 29 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 1 ԴՌԱՆ ԵՎ 1 ՊԱՏՈՒՀԱՆԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի փողոցի թիվ 9 շենքի թիվ 29 բնակարանի բնակիչ Արսեն Սասունի Աղաջանյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ ՀՀ <<Արմավիրի մարզի>> նոտարական տարածքի նոտար Սիլվա Մանվելի Ասատրյանի կողմից 01.04.2022թ. հաստատված թիվ 805 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Ջիվան Հարությունյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 29.11.2022թ. կազմված հատակագիծը և կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը 2022LTHCZX /, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի փողոցի թիվ 9 շենքի թիվ 29 բնակարանին կից ինքնակամ կառուցված 44.1քմ մակերեսով կցակառույցի, ինքնակամ բացված թվով 1 դռան և 1 պատուհանի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի փողոցի թիվ 9 շենքի թիվ 29 բնակարանին կից ինքնակամ կառուցված 44.1քմ մակերեսով կցակառույցը, ինքնակամ բացված թվով 1 դուռը և 1 պատուհանը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 29 988 / քսանինը հազար ինը հարյուր ութսունութ / ՀՀ դրամ:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 994

30 հունիսի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կոմիտասի փողոցի թիվ 8 տան բնակիչ՝ Սարգիս Մեսրոպի Խաչատրյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող 04-002-1049-0025 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական տրված՝ 30.05.2022թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002GLREMUX տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Էջմիածին-Մարգարա խճուղի թիվ 20/8 հողամաս :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ, МУНИЦИПАЛИТЕТ ВАГАРШАПАТСКОЙ ОБЩИНЫ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ, MUNICIPALITY OF VAGHARSHAPAT COMMUNITY
04440307

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 100Կ

31 հոկտեմբերի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նար-Դոսի փողոցի թիվ 12շենքի 15 բնակարանի բնակիչ՝ Մարիամ Պետիկի Հակոբյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արարատյան փողոցի թիվ 34ա հանրակացարանի թիվ 22դե բնակարանին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 2850179 տրված՝ 19.09.2011թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002MERXBYV տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Արարատյան փողոցի թիվ 34ա շենք թիվ 22/3 բնակարան :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 101Ա

31 հունվարի 2023թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի, Խրիմյան Հայրիկի փողոցի թիվ 16 տան բնակիչ՝ Սամվել Արտավազդի Պողոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ. Պատկանյան փողոցի թիվ 51/51 և Ռ. Պատկանյան փողոցի թիվ 51/50 հասցեների անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ թիվ 18052022-04-0074 տրված՝ 18.05.2022թ. և թիվ 17012023-04-0052 տրված՝ 17.01.2023թ, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար՝ Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 25.01.2023թ. հաստատված թիվ 508 սեղանամատյանով գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002TKCGQRW/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ռ. Պատկանյան փողոցի թիվ 51/50 խանութ:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1024

31 հոկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԻՍՐԱՅԵԼ ՕՐՈՒ / ՆԱԽԿԻՆ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ / ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ռուբինյանց փողոցի թիվ 21/3 շենքի թիվ 10 բնակարանի բնակիչ Ջուլիետա Հենրիկի Սեդրակյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ ՀՀ ՝՝Արմավիրի մարզ՝՝ նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 30.08.2022թ. հաստատված թիվ 6624 գրանցամատյանով գրանցված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Իսրայել Օրու / նախկին Ղարիբջանյան / փողոցի թիվ 1ա հասցեում գտնվող բնակելի տան նպատակային նշանակությունը՝ հասարակականի, գործառնական նշանակությունը խանութի փոփոխելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Իսրայել Օրու / նախկին Ղարիբջանյան / փողոցի թիվ 1ա հասցեում գտնվող բնակելի տան նպատակային նշանակությունը բնակելիից փոփոխել հասարակական նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ խանութի, որը հնարավոր է առանց նախագծային փոփոխությունների:
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Իսրայել Օրու / նախկին Ղարիբջանյան / փողոցի թիվ 1ա հասցեում գտնվող 0.0111հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակելիից փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1034

31 հոկտեմբեր 2023թ.Ք.ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով ՀՀ ք.Երևան Քանաքեռ-Զեյթուն, Ռուբինյանց փողոցի թիվ 21/3 շենքի թիվ 10 բնակարանի բնակիչ՝ Ջուլիետա Հենրիկի Սեդրակյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Իսրայել Օրու /նախկին Ղարիբջանյան/ փողոցի թիվ 1ա հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 30.08.2022թ. հաստատված թիվ 6624 սեղանամատյանով գրանցված անշարժ գույքի նվիրատվության պայմանգիրը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002HRJMGTD/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Իսրայել Օրու փողոց թիվ 1/1 խանութ :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1044

31 հոկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Խ.Աբովյան փողոցի թիվ 13 շենքի թիվ 11 բնակարանի բնակիչ Արամ Աշոտի Մարգարյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ 08.12.2022թ. տրված թիվ 08122022-04-0036 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող 04-002-1026-0013 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողին կից համայնքային սեփականություն հանդիսացող 0.7674հա մակերեսով / ծածկագիր 04-002-1026-0014 /, գյուղատնտեսական նշանակության վարելահողը /5-րդ կարգ/ ուղղակի վաճառքով իրեն օտարելու խնդրանքով: Նշված հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հնարավոր չէ այն օտարել որպես առանձին գույքային միավոր:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ կետի , «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող 04-002-1026-0013 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողին կից համայնքային սեփականություն հանդիսացող Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող 0.7674հա մակերեսով / ծածկագիր 04-002-1026-0014 / գյուղատնտեսական նշանակության վարելահողը /5-րդ կարգ/ ուղղակի վաճառքի միջոցով օտարել Արամ Աշոտի Մարգարյանին:
2. Արամ Աշոտի Մարգարյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 761 645 / յոթ հարյուր վաթսունմեկ հազար վեց հարյուր քառասունհինգ / ՀՀ դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 105Ա

31 հունվարի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24.01.2023Թ. ԹԻՎ 70Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 24.01.2023թ. «Անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 70Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝.

եզրափակիչ մասում նշված «04002ZDRFPGA» բառերի փոխարեն կարդալ «04002GEPJVFF» բառերը, իսկ Վաղարշապատ համայնք Ս.Տեր-Գաբրիելյան փողոց թիվ «17» բառերի փոխարեն կարդալ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին Ս.Տեր-Գաբրիելյան փողոց թիվ «17/1» բառերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1064Ա

31 հոկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ. Շիրազի փողոցի թիվ 57 տան բնակիչ՝ Խաչատուր Հովագիմի Կիրակոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա. Մանուկյան թաղամաս թիվ 33, Ա. Մանուկյան 2-րդ թաղամաս թիվ 33/1 հասցեների անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 27122022-04-0056 տրված՝ 27.12.2022թ., Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար՝ Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 20.01.2023թ. հաստատված թիվ 206 սեղանամատյանով գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 040028MU8BQU/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ա. Մանուկյան 2-րդ թաղամաս թիվ 33 հողամաս:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10ԿԱ

31 հոկտեմբերի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Արծրունի Եղբայրներ փողոցի 7 փակուղու թիվ 13 տան բնակիչ՝ Սերյոժա Տիգրանի Տոնոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի 04-002-0522-0010 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 14052020-04-0015, տրված 14.05.2020թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002TU8KYV3/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ե.Չարենցի 1-ին թաղամաս թիվ 568 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 108Ա

01 փետրվարի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 61Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի թիվ 61Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը. որոշման ամսաթվում նշված « 24.01.2022թ. » բառերի փոխարեն կարդալ «24.01.2023թ.» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 109-Ա

«01» փետրվարի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 23 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48 հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակիչները գտնվում են սոցիալապես ծանր պայմաններում, Վաղարշապատի համայնքապետարան են դիմել թվով 23 բնակիչներ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով:

Անհրաժեշտությունից ելնելով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2023թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից Վաղարշապատ համայնքի թվով 23 բնակիչների հատկացնել 1210000 դրամ դրամական օգնություն համաձայն կից ցուցակի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված

ՑՈՒՑԱԿ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 23 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «01» ՓԵՏՐՎԱՐԻ 2023Թ. ԹԻՎ 109-Ա ՈՐՈՇՈՒՄՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ

N	Ազգանուն, Անուն, Հայրանուն	Հասցե	Անձնագրի N	Գումար
1.	Ուռուսյան Գայանե Գրիշայի	Սբ. Մ. Մաշտոց 4	AP0688372	40000
2.	Մելքոնյան Նաիրա Գրիգորի	Պուշկինի 16	AP0653554	40000
3.	Մարուքյան Ռիտա Փայլակի	Չարենց 88	AN0579993	40000
4.	Բարսեղյան Դիաննա Վրույրի	Վ. Սարգսյան 65ա	AP0524487	40000
5.	Խաչատրյան Արտաշես Մայիսի	Բաղրամյան 111	AT0202778	40000
6.	Իսաջանյան Էդիտա Վաղինակի	Ալավերդյան 11	005066741	40000
7.	Սլոբցովա Կամելիյա Լվովնա	Լիդիցե 2/60	AP0636642	40000
8.	Այվազյան Արմինե Գագիկի	գ. Ոսկեհատ 16 փ. տ. 1	003136694	40000
9.	Բաղդասարյան Ազատ Աշոտի	Կարճիկյան 1/37	AV0589694	40000
10.	Սուքիասյան Մայիս Շիրակի	Ալավերդյան 1 փկղ. 2/3	AV0501903	50000
11.	Կիրակոսյան Անուշ Ժորայի	Չարենց 6/40	000736371	50000
12.	Գևորգովա Աննա Արտուշի	Արագածի 2 գ. քոթեջ 103	008591836	50000
13.	Բեգիյան Անժելա Աղվանի	Դավիթ Անհաղթ 25/44	AR0345971	50000
14.	Հովհաննիսյան Լիա Սուրենի	Այգեստան 5/59	AN0635730	50000
15.	Ֆրնզյան Հայկանուշ Գրիգորի	Միչուրին 3 փկղ. 2/1	AS0664168	50000
16.	Բաբայան Անգին Ռաչիկի	Չարենց 13/7	009394578	50000
17.	Հակոբյան Անդրանիկ Ռուբիկի	Չարենց 19/49	AU0506819	50000
18.	Մանուկյան Էդգար Վրեժի	Սբ. Մ. Խորենացի 1/23	AS0355374	60000
19.	Զարմանյան Հռիփսիմե Գևորգի	Սբ. Մ. Մաշտոց 85ա/25	AV0600196	70000
20.	Զարմանյան Անահիտ Մարտունիկի	Սբ. Մ. Մաշտոց 85ա/25	AU0414179	70000
21.	Կիրակոսյան Արմինե Արիստակեսի	Մանուշյան 12	AR0638111	70000
22.	Սարգսյան Կարինե Հարությունի	Բաղրամյան 20բ/21	AV0280984	8000
23.	Ալեքյան Թամարա Ալբերտի	Զվարթնոց 12/10	AR0554015	10000
	ԸՆԴԱՄԵՆԸ			12100

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 110Կ

«01» փետրվարի 2023թ.

ք. Էջմիածին

ՀՐԱՉԻԿ ՎԱԼՈՂԻ ՕԳԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ, 36-38-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի Մաշտոց 40-րդ շենքի 7-րդ բնակարանի բնակիչ Հարություն Վալոդի Օհանյանի 24.01.2023թ. դիմումը, թիվ ԱՐԴ1/0044/02/17 քաղաքացիական գործով ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ անձին անգործունակ ճանաչելու մասին վճիռը, Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 30.01.2023թ. թիվ 4 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի Մաշտոց 40-րդ շենքի 7-րդ բնակարանի բնակիչ Հրաչիկ Վալոդի Օգանյանի /ծնված՝ 08.02.1986թ., անձնագիր՝ AS 03747054/ նկատմամբ սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով եղբորը՝ Հարություն Վալոդի Օհանյանին /ծնված՝ 21.05.1977թ., անձնագիր՝ AR 05742452/
2. Հսկողություն սահմանել Հրաչիկ Վալոդի Օգանյանի խնամակալ Հարություն Վալոդի Օհանյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 112Ա

02 դեկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

ՔՆԱՐԻԿ ԳՐԻԳՈՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԵՎ ՏԻԳՐԱՆ ՄԻՇԱՅԻ ՂԵՎՈՆԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԵՎ 20/ՏՈԿՈՍ/ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3-րդ ենթակետերի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 45բ շենքի թիվ 2 բնակարանի բնակիչ՝ Քնարիկ Գրիգորի Պետրոսյանի դիմումը իրեն և Տիգրան Միշայի Ղևոնդյանին պատկանող /հիմք՝ <<Հայաստանի Ազգային Արխիվ>> ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 02.11.2021թ. տրված N Ամ-1347 արխիվային տեղեկանքը, Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 01.02.2023թ. տրված քաղվածքը, Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 01.02.2023թ. տրված տեղեկանքը և <<Արփինե Սուքիասյան Մադոյի>> ԱՁ-ի/ որակավորման վկայական թիվ 0428/ կողմից 17.12.2021թ. կազմված հատակագիծը/ <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող 0.25հա /ծածկագիր 04-002-0168-0005/ և 0,2հա /ծածկագիր 04-002-0169-0006/կկ. ընդհանուր՝ 0.45հա գյուղատնտեսական նշանակության հողամասից ավել օգտագործվող 0.05743հա ընդհանուր մակերեսով հողամասը իրենց հատկացնելու խնդրանքը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին պետական գրանցման աշխատանքների ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված փաստացի օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակույթային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում ինչպես նաև չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և չի առաջացնում սերվիտուտ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող 0.25հա և 0,2հա, ընհանուր 0.45հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասին կից ավել օգտագործվող 0.05743հա մակերեսով հողամասը ճանաչել Քնարիկ Գրիգորի Պետրոսյանի և Տիգրան Միշայի Ղևոնդյանի սեփականությունը /որից՝ 0.25հա հողամասին կից ավել օգտագործվում է 0,03461հա մակերեսով հողամաս և 0.2հա հողամասին կից ավել օգտագործվում է 0.02282հա մակերեսով հողամաս/:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МЭРИЯ ВАГАРШАПАТСКОЙ ОБЩИНЫ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 113Ա

02 փետրվարի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02.12.2022Թ. ԹԻՎ 2093Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 02.12.2022թ. « Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները Նորայր Անուշավանի Պետրոսյանի սեփականությունը համարելու մասին » թիվ 2093Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

որոշման նախաբանում նշված «Սևան Թովմասյան» բառերի փոխարեն կարդալ «Աստղիկ Մանուկյան» բառերը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1174

02 դեկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Հ.ԴԱՆՂՅԱՆ /ՆԱԽԿԻՆ ՍՎԵՐԴԼՈՎ/ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 58Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ.Դանղյան փողոցի թիվ 58բ տան բնակիչ Գյոզալ Սարգսի Սողբաթյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ ՀՀ ՝՝Արմավիրի մարզ՝՝ նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 20.12.2022թ. հաստատված թիվ 4445 և 4446 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի և սեփականության իրավունքի վկայագրերը, «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 01.12.2022թ կազմված հատակագիծը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 20223ZGN2S / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ.Դանղյան /նախկին Սվերդլով/ փողոցի թիվ 58բ հասցեում գտնվող 0.0343հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 16.4քմ /արտաքին 16.4քմ, ներքին 15քմ/ մակերեսով բնակելի տունը օրինականացնելու խնդրանքով:

